



190

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

N 586 - Ա

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ոստիկանության կրթահամալիրի սովորողների գործնական հմտությունները և կարողությունները կատարելագործելու նպատակով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 18-րդ կետի «ա» ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ստեղծել «Ոստիկանության կրթահամալիրի իրավաբանական կլինիկա:
2. Հաստատել «Ոստիկանության կրթահամալիրի իրավաբանական կլինիկայի կանոնադրությունը (համաձայն հավելված 1-ի):
3. Հաստատել «Ոստիկանության իրավաբանական կլինիկայում ուսուցում ստացած սովորողներին տրվող հավաստագրի ձևը (համաձայն հավելված 2-ի):
4. «Ոստիկանության կրթահամալիրի իրավաբանական կլինիկայի ղեկավարի պարտականությունների կատարումը հանձնարարել «Ոստիկանության կրթահամալիրի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ոստիկանության փոխգնդապետ Արմինե Սերժիկի Մելիքսեթյանին:
5. «Ոստիկանության կրթահամալիրի իրավաբանական կլինիկայի ղեկավարի օգնականի պարտականությունների կատարումը հանձնարարել «Ոստիկանության կրթահամալիրի իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս, ոստիկանության մայր Լալա Արշավիրի Գրիգորյանին:
6. Հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել «Ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության գնդապետ Գագիկ Թևադոսի Գրիգորյանին:
7. Հրամանը ծանոթացնել անձնակազմին իրեն վերաբերող մասով:

ՊԵՏ,  
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ



Մ. Բ Ա Բ Ա Յ Ա Ն

«12» 11 2018թ.  
ք. Երևան

